

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1. Անունը ազգանունը, զբացեցրած պաշտոնը՝** Վահե Գրիգորյան, ՀՀ Միջուկային Անվտանգության Կարգավորման Կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ:
- 2. Գործուղման վայրը/ ժամկետը՝** Վիեննա, Ավստրիա, 2023թ. մարտի 20-31:
- 3. Հրավիրող կողմը՝** Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալություն (այսուհետ՝ ԱԷՄԳ):
- 4. Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Միջուկային Անվտանգության Կոնվենցիայի 8-րդ և 9-րդ համատեղ դիտարկման հանդիպման աշխատանքներին:
- 5. Քննարկված թեմաները՝** Հանդիպման ընթացքում քննարկվել է Միջուկային անվտանգության Կոնվենցիայի դրույթների կատարումը, այդ թվում նաև ռազմական իրավիճակներում:
- 6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝** Հանդես եմ եկել զեկույցով՝ 2017-2023թթ. ընթացքում ՀՀ կողմից Միջուկային անվտանգության կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ՝ ներկայացնելով միջուկային անվտանգության կարգավորման նպատակով Կոմիտեի կողմից իրականացված աշխատանքները, ՀԱԷԿ կողմից իրականացված անվտանգության բարձրացման միջոցառումները, Ֆուկուշիմայի ԱԷԿ վթարից հետո սթրես-թեսթի միջոցառումների ազգային ծրագրի իրականացումը, վթարային պատրաստվածությունը և այլ թեմաներ: Սույն հանդիպման հատուկ խնդիրներն էին՝ անվտանգության համար կարևոր տարրերի ծերացման կառավարումը և անվտանգության կուլտուրան: Զեկույցի ընթացքում հատուկ ուշադրության արժանացան սույն հարցերը՝ ներկայացվեցին Կոմիտեի կողմից սույն խնդիրների կարգավորման համար օրենսդրական դաշտը, իրականացվող ստուգումները և իրականացվող վերլուծությունները, ինչպես նաև ՀԱԷԿ-ի կողմից իրականացվող աշխատանքները:

Զեկույցից հետո մասնակից երկրների կողմից ազգային հաշվետվությունների և ելույթի վերաբերյալ հնչեցին հարցեր, որոնց նկատմամբ տրվեց սպառիչ պատասխաններ:
- 7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**
Հանդիպման արդյունքում, կազմվեց ՀՀ ազգային հաշվետվությունը, որտեղ ամփոփվեց 2017-2023թթ. ընթացքում ՀՀ կողմից միջուկային անվտանգության բարձրացման աշխատանքները:
Երկրների խմբի կողմից արձանագրվեց, որ ՀՀ կողմից իրականացվել են համապատասխան քայլեր Միջուկային անվտանգության կոնվենցիայի 7-րդ դիտարկման արդյունքում ի հայտ եկած 2 մարտահրավերները և 1 խորհուրդը իրականացնելու համար և կատարված աշխատանքների արդյունքում դրանք փակվեցին՝ համարվելով կատարված:

Միջուկային անվտանգության կոնվենցիայի 8-րդ և 9-րդ համատեղ դիտարկման արդյունքում, ՀՀ հետ նույն խմբում ընդգրկված երկրների ներկայացուցիչների կողմից նշվեցին հետևյալ մարտահրավերները՝

- ✓ *Մարտահրավեր 1* – Մինչ ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի շահագործումից հանումը նոր էներգաբլոկի(ների) կառուցում,
- ✓ *Մարտահրավեր 2* – ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկրորդ երկարացման լիցենզավորում,
- ✓ *Մարտահրավեր 3* – Կոմիտեի անձնակազմի համալրում և վերապատրաստում,
- ✓ *Մարտահրավեր 4* – *Կարգավորող մարմնի պատրաստում՝ հնարավոր նոր տեխնոլոգիաների ներգրավմանը (օրինակ՝ ՓՄՌ),*
- ✓ *Մարտահրավեր 5* – *Կոմիտեի շրջակա միջավայրի մոնիթորինգային լաբորատորիայի ստեղծում:*

Երկրների խմբի կողմից արձանագրվեց նաև հետևյալ «Լավ իրականացման ոլորտները».

1. ՀՀ իրավական դաշտի մոտարկում Եվրամիության դիրեկտիվներին,
2. ՀԱԷԿ հսկման գոտի մուտք գործող անձանց կողմից կլանված դոզայի ավտոմատ հսկման համակարգ,
3. Լիցենզավորված կազմակերպությունների անվտանգության կուլտուրայի վերահսկողության ուղեցույցի մշակում,
4. Ռեակտորի իրանի վերականգնողական թրծման իրականացում և փխրուն քայքայման հաշվարկներում կոնսերվատիվ մոտեցումների կիրառում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բոլոր երկրների ելույթների և ազգային հաշվետվությունների հիման վրա, մասնակիցների կողմից արձանագրվեցին հետևյալ համանման խնդիրները՝

1. Արտառոց իրավիճակների կառավարում, որոնք կարող են ազդել միջուկային տեղակայանքների անվտանգ շահագործման վրա,
Իրականացնել՝ Խրախուսվում է, որ երկրները մշակեն և ներդնեն ռազմավարություն, մոտեցումներ և արտակարգ իրավիճակների պլան՝ կառավարելու արտառոց իրավիճակները, ինչպիսիք են՝ Կովիդ-19 համավարակը, էքստրեմալ եղանակային աղետները, ռազմական բախումները և այլն:
2. Կարգավորող մարմինների ունակությունների ուժեղացում՝ հաշվի առնելով նոր և ինովացիոն տեխնոլոգիաները,
Իրականացնել՝ Պայմանագրային կողմերը պետք է ներդնեն կարողությունների զարգացման երկարաժամկետ ծրագրեր՝ մոտարկելու համար կարգավորման կարողություններն ապագա կարիքների հետ:
3. Միջազգային համագործակցության ընդլայնում
Իրականացնել՝ Խրախուսվում է, որ երկրները ընդլայնեն միջազգային համագործակցությունը և մասնակցեն միջազգային տարբեր տեսակի համատող ծրագրերին՝ դիտարկելու և վերլուծելու ՓՄՌ նախագծերը:
4. Միջազգային գործընկերական դիտարկումների ընդլայնում և հայտնաբերված փաստերին ժամանակին անդրադարձում:

Իրականացնել. Խրախուսվում է, որ երկրները պարբերաբար հրավիրեն ԱԷՄԳ առաքելություններ, ներառյալ հետադարձ առաքելություններ (follow-up), որպեսզի արձանագրվի իրավիճակը և հայտնաբերված փաստերին ժամանակին անդրադարձը:

5. Կլիմայի գլոբալ փոփոխության հավանական ազդեցությունը միջուկային տեղակայանքների անվտանգ շահագործմանը:

Իրականացնել" Խրախուսվում է, որ պայմանագրային կողմերը դիտարկեն կլիմայի գլոբալ փոփոխության ազդեցությունը միջուկային տեղակայանքների անվտանգ շահագործմանը:

6. Հուսալի մատակարարման շղթայի ապահովում:

Իրականացնել" Խրախուսվում է, որ երկրները ներկայացնեն հուսալի մատակարարման շղթայի ապահովման փորձը:

7. Միջուկային տեղակայանքների շահագործման ապահովման համար ծերացման կառավարման ռազմավարություն:

Իրականացնել. Խրախուսվում է, որ երկրները ներկայացնեն իրենց փորձը ծերացման կառավարման ռազմավարության ներդրման և ծերացման կառավարման արդյունավետության փորձը՝ նախագծումից մինչև շահագործումից հանում՝ հատուկ ուշադրության արժանացնելով նոր հայտնաբերված ծերացման գործընթացներին:

8. Վթարային պատրաստվածության և արձագանքման ամրապնդում և անդրսահմանային համագործակցություն,

Իրականացնել" Խրախուսվում է, որ երկրները ամրապնդեն միջազգային համագործակցությունը, ինչպես նաև անցկացնեն և մասնակցեն համատեղ վթարային վարժանքներին և զարգացնեն վթարային պատրաստության և արձագանքման ոլորտում փորձագետների համագործակցությունը:

Վերոնշյալ խնդիրների և մարտահրավերների ուղղությամբ իրականացված աշխատանքներին պետք է անդրադառնալ Միջուկային անվտանգության կոնվենցիայի 10-րդ դիտարկման հանդիպման ազգային հաշվետվությունում և ազգային զեկույցում, որի հանդպումը տեղի կունենա 2026թ" ապրիլի 13-24:

4/5/2023

X

ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN VAHE 2604780283

Վահե Գրիգորյան